

Մագաղաթի գիւտէն ետք բոլոր արտասո-
վոր կարեւորութեան վաւերագրերը գրուե-
ր են անոր վրայ: Գաշնագիր, հրովարտակ, պայ-
մանագրութիւն, սուրբ գիրքեր ոչ միայն մի-
ջին դարուն, այլ մինչեւ մեր օրերը կը գրուին
մագաղաթի վրայ:

Մագաղաթը կը պատրաստեն ընդհանրա-
պէս ոչխարի մորթէն, որ կաշիի եւ մսի միջեւ
եղած թաղանդն է:

Լաւագոյն մագաղաթը կը ստացուի հոր-
թիկէն, որ աւելի նուրբ է եւ աւելի բաց գոյնի:

Ամենէն նուրբ մագաղաթը ստացուած է
մեռելածին գառներէն:

Զանց կ'ընեմ զանազան պատմուածքներ,
ըստ որում՝ իբր՝ մարդու կաշիէն, մանաւանդ
կնոջ կաշիէն ստացեր են նրբագոյն մագաղա-
թը:

Մագաղաթը ձեռք բերելու դժուարու-
թիւնները պատճառ եղած են, որ մարդիկ եր-
բեմն հին գրուածները սրբեն եւ տեղը նորը
գրեն: Շատ անգամ ալ մսխումէ խուսափելու
եւ տեղ խնայելու նպատակով բառերը ամբող-
ջական տառերով չեն գրած, այլ կրճատած են
եւ պատիւներով անցած:

Այս նկատումով է հաւանաբար նաեւ այն
որ գեղադրողներէն ոմանք տառերը ծայր աս-
տիճան մանր գրած են: Պլինիոս այս կարգի
մէկին գործին մասին խօսելով կ'ըսէ. «Ամբողջ
Իլիականը ընկոյղի մը կեղեւին մէջ սղմեցու-
ցեր է»:

Զանազան աղէտալի դիպուածներ (բար-
բարոսներու արշաւանք, պատերազմ եւայլն)
պատճառ դարձած են, որ մագաղաթի հայ-
թայթումը նուազի: Մինչեւ թղթի գիւտը
(16-րդ դար) մագաղաթի նուազութեան տագ-
նապներ շատ են եղած:

Ոխտ հին ժամանակներ, երբ մեր գիւտ-
ցած ձեռով կազմուած գիրքը դեռ հնարուած
չէր, կը գրէին իրար կցուած կտորներէ բաղ-
կացած, երկար, անհաւատալի երկար ուղրա-
ծոյի վրայ:

Մագաղաթը շուրջօրէն չլատնելու հա-
մար՝ երկու երեսին վրայ ալ կը գրէին:

Գիրք ըսուած բանը հնարուելէ ետք՝ դեռ
հատորը չկազմած՝ թերթերը առանձին կը գը-
րէին եւ յետոյ կը կազմէին, ինչ որ մեծ յար-

մարութիւն էր թէ գրողին եւ թէ նկարագար-
ողին համար: Բայց եւ շատ անգամ ալ հա-
տորը կազմելէ ետք գրեր են. ասոր ապացոյց
կը համարուի գրիչին մեռնելէ ետք թերթերէն
ոմանց պարսպ մնացած ըլլալը:

Պատերազմներու, արշաւանքներու, թըշ-
նամու ներխուժումներու, հրդեհի, հեղեղի,
խոնաւութեան, ծովակոծութեան եւ այլ բազ-
մաթիւ պատահարներու պատճառով փճացած
են բազմահազար հատորներ մագաղաթի վրայ
գրուած:

Մագաղաթը լաւ պահպանելու, մզլելու
կամ ցեցի դէմ պաշտպանելու համար զայն
կ'օծէին հոտաւէտ իւղով մը, որ կը ստացուէր
cedre ծառէն, թէեւ այս իւղը մագաղաթի
գոյնը քիչ մը կը դեղնեցնէր:

*

Գիրքը, այն ձեռով ինչպէս որ այսօր գի-
տենք, շատ հին առնէ է Վեր ծանօթ եղած է:
Փորագրաբանդակ cameo-ի մը վրայէն արտա-
գրուած տեսած եմ Սկիպիոն Ափրիկեանի աղ-
ջիկ եւ Գրակիոսեանց մայր Գորնէլիայի պատ-
կերը, որ թիկնաթոռի վրայ նստած է եւ ձեռ-
քը բռնած ունի մեզ ծանօթ ձեռով կազմուած
գիրք մը (տես Encyclopedie P. Larousse):

Վատիկանի մատենադարանին մէջ երկու
օրինակ «Վերգիլիոս» կան, որոնք կը կարծը-
ւին՝ ըստ ոմանց՝ 3-րդ դարու, եւ՝ ըստ այ-
լոց՝ 5-րդ դարու գործեր: Միջակ արժէք ներ-
կայացնող պատկերադարձութեամբ այս գոր-
ծերը հաւանաբար կը պատկանին 4-րդ դա-
րուն:

Միւրանի «Ամբրոզիանա» մատենադարանին
մէջ կայ մէկ օրինակ «Իլիական», 5-րդ դարու
գործ, ուր պատկերացուած են Հոմերական
դիւցազներգութեան բազմաթիւ դէպքեր:

Երկու երեք հարիւր տարի ուշ ժամանակի
գործեր են 1 օրինակ «Տէրէնցիօ» Վատիկանի
մէջ եւ 1 օրինակ եւս «Տէրէնցիօ» Փարիզի աղ-
գային մատենադարանին մէջ:

Այս վաւերագրերը ցոյց կուտան, որ, Քը-
րիստոսէ առաջ դեռ՝ մանրանկարներով գրքեր
պատկերադարձելու արուեստը մեծապէս յար-
գի է եղեր:

* * *